

դոնուում էր «մեծ, նախ և առաջին եկեղեցին», «այդ եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց» (Բիւզանդ. Գ. Ժդ. 36): Այժմ պէտք է հասկանալի լինի, թէ Սանէսանի զօրագնդերը մինչև Աշտիշատ հասել էին, այդ հարուստ տաճարը կողոպտելու յուսով: Բիւզանդը յիշում է Յլու գլխի կռուի օրուայ նոյն իսկ ժամանակը. «յառաւօտեան ժամուն այգենալոյն պաշտամանն», որ մենք հասկանում ենք այսպէս, թէ այդ ճակատամարտն օրուան այն ժամանակն է սկսել, երբ նախկին մեհենում, այժմ եկեղեցում առաւօտեան ժամասացութիւնն էր կատարւում:

Սանիան Կանայեցոց.

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ուղարկելով Թեֆլիսի սարկաւազներն և դպիրներն թեմիս սրբազան Առաջնորդին տուած խնդրի պատճէնը, որը վերաբերում է իրենց դասակարգի ազնուացման, նիւթական աննախանձելի վիճակի բարւոքմանը՝ խնդրում եմ տեղ տուէք նրան «Արարատ»-ի առաջիկայ համարում:

Այս մեր խնդրի մասին լուր տուինք «Տարադ»-ին և «Մշակին»-ին: Իբրև լուր տպուեց և անցաւ: Ոչ ոք չհետաքրքրուեց այդ հարցով: Շատ տարօրինակ է մեր հասարակութիւնը. նա կարծէք հետաքրքրւում է ժամանակակից ամեն տեսակ հարցերով, մինչև անգամ նրան զբաղեցնում է սափրիչների, մսագործների, կօշիկարների և շատ ուրիշների վիճակը՝ պաշտպանում է նրանց. խօսում և գրում են: որ նրանք էլ մարդ են մարդկանց շարքում, ապա ուրեմն նրանց հետ էլ պէտք է մարդավարի վարուիլ և նրանք էլ պէտք է վարձատրուին, որ դոնէ շատ համեստ կարողանան տպրել, բայց ոչ ոք չուզեց հետաքրքրուել իրենց եկեղեցւոյ պաշտօնեաների հարցով: Թեմիս սրբազան Առաջնորդը այս հարցը իրա սրտին շատ մօտ հարց համարեց և պատգամաւորներին խոստացաւ մօտիկ ապագայում զբաղուելու նրանով:

Յանկալի է, որ շատերը իրենց սրտին մօտ հարց համարէին այս կարևոր խնդիրը և հրապարակաւ մշակուէր: Իբրև «Արա-

բառ»-ի բուն ծրագրին վերաբերող հարց՝ ցանկալի է, որ «Արա-  
բառ»-ը բաց անէ իր լայն էջերը այս և սրա նման անհետա-  
ձգելի խնդիրների համար:

Յաջորդ անգամ կ'սօսեմ սրբազան Առաջնորդին ներկա-  
յացրած խնդրի կէտերի մասին:

Սարգիս սարկ. Խուցեանց.

Տփլիսի Հայոց եկեղեցիների սարկաւազների եւ  
դպիրների խնդրագիրը թեմակալ առաջնորդին  
Վրաստանի եւ Իմերէթի.

Ձերդ սրբազնութեան շնորհաբեր գալստեան առթիւ  
Տփլիսի սարկաւազներիս և դպիրներիս որաբերում ծագեց խո-  
րին հաւատ մեր կեանքի բարելաւութեան նկատմամբ, և այդ  
հաւատը առաջ բերեց մեր մէջ Ձերդ սրբազնութեան այն յու-  
սադրող և բազմաբովանդակ խօսքերը թէ՛ «ես լսել եմ, որ  
Տփլիսի քահանաները տռհասարակ վատ են վերաբերում դէպի  
Ձեզ—ճնշում են. իմ դուռը միշտ բաց է և զուրք ազատ կերպով  
կարող էք ձեր բողոքներն ինձ յայտնել և ես հայրաքաղաք կօգ-  
նեմ ձեզ կարողութեանս չափ»:

Երևել արժանաւոր այդպիսի գորովագութ խօսքեր չէինք լսել  
մեր բարձր իշխանութեան բերանից. անսովոր աւետիք էր այդ  
մեզ համար, անսովոր, բայց ներկայիս համար անհրաժեշտ:

Ոսկայն որչափ ցանկալի և ուրախալի կ'լինէր բողոքի հա-  
մար տեսնել Ձերդ սրբազնութեան այդ աւետիքի կատարումը  
մեր անմխիթար, չարքաշ և զրկանքներով լի օրերում:

Դուք, Սրբազան Հայր, դիտակցելով տիրացու կոչուած  
խրաւադուրկ դատակարգի կարիքները և իրական աննախանձելի  
վիճակը, Ձեր այդ խօսքերով վստահութիւն ներշնչեցիք մեզ մեր  
կարիքների և նեղութիւնների ժամանակ դիմելու Ձերդ բարձր  
հովանաւորութեանը՝ իբրև մի հմուտ բժշկի, արդար դատա-  
ւորի, սպեղանի ստանալու մեր վերքերին, վերականգնելու մեր  
ոտնակոխ եղած իրաւունքները և հայրական սիրովանք գտնելու  
մեր զրկուած վիճակի համար:

Սրբազնութեանդ այդ խօսքերը իրաւունք են տալիս մեզ  
նկատելու յանձին Ձեր՝ բարձր մարդասիրական զգացմունքներ